

**ԱՎԱՆԴԻ ԳՐԱՎՈՎ ՎԱՐԿԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ
(Ֆիզիկական անձանց համար)**

Տեսակ		Վարկ	Վարկային գիծ ¹
Արժույթ		ՀՀ դրամ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
Գումար/Սահմանաչափ		500,000-30,000,000 ՀՀ դրամ 1,000 – 60,000 ԱՄՆ դոլար/Եվրո	
Ժամկետ		Մինչև 60 ամիս	
Տարեկան անվանական տոկոսադրույք²	ՀՀ դրամ	Ավանդի դիմաց վճարվող տոկոսադրույք + 5 տոկոսային կետ, բայց ոչ պակաս քան՝ 14%	
	ԱՄՆ դոլար/Եվրո	-	Ավանդի դիմաց վճարվող տոկոսադրույք + 5 տոկոսային կետ, բայց ոչ պակաս քան 9%
Մեկից ավել և/կամ տարբեր արժույթներով ժամկետային ավանդների գրավադրման դեպքում վարկի տոկոսադրույքը որոշվում է հիմք ընդունելով առավելագույն տոկոսադրույքով ավանդը:			
Տոկոսագումարների հաշվարկման կարգ	Վարկային գծերի դեպքում տոկոսադրույքը կիրառվում է փաստացի օգտագործված գումարի նկատմամբ՝ անկախ օգտագործման եղանակից, իսկ վարկերի դեպքում տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից: Վարկային գծերի չօգտագործված մասի նկատմամբ տոկոս չի հաշվարկվում:		
Կանխիկացման վճար		0%	Համաձայն համապատասխան վճարային քարտի սակագների
Հաշվի սպասարկման լրացուցիչ միանվագ վճար		Չի սահմանվում	

¹ Տրամադրվում է միայն Բանկում բացված քարտային հաշվի վարկավորման միջոցով:

² Ավանդի համար վճարվող տոկոսադրույքի փոփոխության դեպքում համապատասխանաբար կարող է փոխվել նաև համապատասխան վարկի և/կամ վարկային գծի տոկոսադրույքը:

Ապահովության/գրավի տեսակ	Բանկում ներդրված ժամկետային ավանդ	
<ul style="list-style-type: none"> Որպես վարկային և/կամ վարկային գծի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ապահովման միջոց կարող է գրավադրվել միայն ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարաձգելու պայմանով կնքված ավանդային պայմանագրով ներդրված ավանդը (վարկային պայմանագրի կնքման դեպքում այս դրույթը կիրառելի է, եթե վարկը տրամադրվում է ավանդի ներդրման ժամկետից ավելի երկար ժամկետով): Գրավի առարկա հանդիսացող դրամական միջոցները (ավանդ(ներ)ը) վարկառուի կողմից կարող են տնօրինվել միայն վարկային և/կամ վարկային գծի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում, ընդ որում՝ մինչև այդ պարտավորությունների ամբողջական կատարումը համապատասխան ավանդային պայմանագրերի լուծման դեպքում ավանդային հաշվին առկա դրամական միջոցները փոխանցվում են հաճախորդի բանկային այլ հաշվի՝ հաճախորդի կողմից դրանց տնօրինման իրավունքի սահմանափակմամբ: 		
Վարկ/Գրավ հարաբերակցություն	Առավելագույնը 95%, ավանդի արժույթով վարկերի դեպքում Առավելագույնը 70%, ավանդի արժույթից տարբեր արժույթով վարկերի դեպքում	
<ul style="list-style-type: none"> Մեկից ավել և տարբեր արժույթներով ժամկետային ավանդների գրավադրման դեպքում Վարկ/գրավ հարաբերակցությունը սահմանվում է 70%: Մեկ ժամկետային ավանդի գրավադրմամբ տարբեր արժույթներով և մեկից ավելի վարկերի տրամադրման դեպքում Վարկ/գրավ հարաբերակցությունը սահմանվում է 70%: 		
Մարման եղանակ	<ul style="list-style-type: none"> Անուկտետային (տոկոսների և մայր գումարի ամենամսյա վճարում) Ազատ մարման գրաֆիկով (տոկոսների ամենամսյա վճարում, մայր գումարի վճարում մինչև վարկի ժամկետի ավարտը) 	Պարտադիր նվազագույն հետվճարի (եթե այդպիսին առկա է) և տոկոսագումարների ամսական վճարում, մայր գումար վճարում մինչև վարկի ժամկետի ավարտը
Վճարային պարտավորությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման դեպքում ուշացման յուրաքանչյուր օրվա համար սահմանված տույժի գումար	Վճարման ենթակա գումարի մինչև 0.13 ³ %	
Անտոկոս ժամանակահատված⁴	-	Մինչև 52 օր՝ կախված վարկն օգտագործելու ամսաթվից
Անտոկոս ժամանակահատվածի սխեմա²	-	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում օգտագործված վարկային գծի գումարը կամ դրա մի մասը մինչև վճարման ժամկետի ավարտի օրը (ներառյալ) վերադարձնելու դեպքում այդ գումարի նկատմամբ գրանցման օրվանից մինչև փաստացի վճարման օրը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար տոկոսներ չեն հաշվարկվում:

³ Նշված տոկոսադրույքը ենթակա է փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխման դեպքում

⁴ Կիրառվում է միայն վարկային գծերի դեպքում որպես առևտրի և սպասարկման կետ գրանցված կետերում կատարված անկանխիկ գործարքների նկատմամբ:

Ամսական նվազագույն հետվճար	-	0.1%
Վճարման ժամկետ՝ սկսած Քաղվածքի օրվանից (ներառյալ)	-	21 օր
Վարկային գծի հասանելի մնացորդի հաշվին վարկային գծի մարման միջնորդավճար՝ մարվող գումարից	-	0.75%

Ծանոթություններ

- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ԵՎ/ՎԱՍ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ (այսուհետ նաև՝ Վարկ) ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Ե ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված Վարկի և/կամ վարկային գծից օգտագործված գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, Վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսադրույքի կրկնապատիկը:
- Վարկավորման նպատակը՝ սպառողական:
- Տրամադրման եղանակը՝ անկանխիկ:
- Վարկի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել.
 - անձը հաստատող փաստաթուղթ,
 - Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ),
 - ամուսնության վկայականի պատճեն կնոջ (ամուսնու) անձը հաստատող փաստաթղթի պատճեն, կնոջ (ամուսնու) ՀԾՀ պատճեն/կամ հայտարարություն ամուսնացած չլինելու մասին,
 - ըստ անհրաժեշտության կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:
- Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և այլ վճարներ չեն գանձվում:
- Հաշվին մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկի պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ միջնորդավճարների, տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի սույն կետով սահմանված մարումն իրականացնել այլ հաջորդականությամբ:
- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱԾՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Ե ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱԾՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Ե ԻՆԵԿՈԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (www.inecobank.am) «Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց» էջում:
- ԶԳՈՒՇԱՑՈՒՄ**՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ՎԱՍ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ: ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱԾՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Ե ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱԾՎԻՆ:
- Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ արտարժույթով տրամադրված Վարկի մարումների վրա:
- Վարկի տրամադրման դրական որոշման գործոններն են՝
 - արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր,
 - բավարար գրավի առկայություն:
- Վարկը մերժելու գործոններն են՝
 - գործող ժամկետանց կամ դասակարգված վարկերի առկայություն,
 - բավարար գրավի առկայության բացակայություն:
- Վարկի տրամադրման որոշման կայացում և հաճախորդին տեղեկացում՝ 1-2 աշխատանքային օր:
- Վարկի տրամադրման ժամկետ՝ Վարկի տրամադրման դրական որոշման կայացումից հետո 1-3 աշխատանքային օր:
- Վարկերը ձևակերպվում են Բանկի մասնաճյուղերում, կենտրոնական գործառնական ստորաբաժանումում և հեռակառավարման համակարգերով:
- Բանկը նախքան վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ի:
- Փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ (վարկերի համար)**

Վարկի գումար՝ 2,000,000 ՀՀ դրամ,
Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 14%,
Ժամկետ՝ 24 ամիս,
Լրացուցիչ վճար՝ 0 ՀՀ դրամ,
Տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 14.93%:

Փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ (վարկային գծերի համար)

Վարկի գումար՝ 2,000,000 ՀՀ դրամ,
Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 14%,
Ժամկետ՝ 60 ամիս,
Վարկային գծի օգտագործում՝ Կանխիկացմամբ,
Վարկի օգտագործման օր՝ 02/05/2019,
Պարտադիր հետվճարի չափ՝ 0,1%,
Լրացուցիչ վճար՝ 0 ՀՀ դրամ,
Տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 15,06%:

17. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն: